



**Հեղակած Արք. Զքիթիան «Գրիգոր Նարեկացի՝ Տիեզերական վարդապետ», «Քանրեր Մատնադարամի», 22(2015), 10-23.**

**«Այլ է համրաւ, այլ է ծշմարտութիւն», Եղիշէ**

### **Տե՛ Ներսէս Աւագ քին. Ներսէսեան**

Յարգելի հեղինակը իր վերամբարձ ոճով գրուած յօդուածի մէջ անրի մակղիբներով է բնուրազրում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետին՝ որպէսզի դրա չուրջ «քանդակի» իր դերը Նարեկացուն «Տիեզերական վարդապետ» հոչակելու գործընթացում։ Տարիներ շարունակ հեղինակը տփորոյք է դարձել յօդուածներ հրատարակել զանազան տեղերում, որոնց մէջ բոլորին ծանօթ տեղեկութիւնների մէջ սարդում են մի քանի անցշտորթիւններ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վերաբերեան։ Երբեք ակնյայտ չէ թէ հեղինակը իր յօդուածներում, ո՞ր Հայ Եկեղեցու ո՞ր յարանուանութեան կամ ո՞ր հասարակութեան մասին է ճառում։ Անպատկառութիւն է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդէա ասել, որ Ժան-Պիեռ Մահէի Վերլուծութիւնը, «որ ինը կ'ապացուան», որ Գրիգոր Նարեկացին վարդապետութեան մէջ որուէ կէտ չկայ, որ հակասէ ուղղափառ կամ Հռոմի Եկեղեցւոյ հասապարի հարթեց Գրիգոր Նարեկացուն «այինքերական որկտոր»ի պատի շնորհելու համար։ Գրիգոր Նարեկացին հայ Եկեղեցուն արդէն կրում էր «տիեզերական վարդապետ»ի [Ուխտանես պատմիչ] կոչումը։ Գրիգոր Նարեկացին հոշակում է «Տիեզերական որկտոր» իր «Մատեան Որենքութեան» համար՝ ի շարս Կապադովիեան հայրերի եւ Եփրեմ Խորի Ասորիի։

Հռոմի Եկեղեցին դեռ շատ հեռու է «Եկումենականութիւն» հասկացողութիւնից։ Կարծում էինք, որ Վիեննայի «Պրո-Օրիենտ»ի [Pro-Oriente] վարած հինգ երկխօսութիւններից (1971, 1973, 1976, 1988) եւ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կարողիկոսի եւ Յովիաննես Պողոս Երկրորդ Պապի միջնե Դեկտեմբեր 1996 բուականին ստորագրուած 'Common Declaration'-ից (Համատեղ Ստորագրութիւնը) յևոյ Հայ Առաքելական Եկեղեցու Ուրախառութեան հարցը մատնուած էր պատմութեան

գիրկը։ Սոյն յիտողութեան հեղինակը անվաներ նկատեց յիշեալ «Համատեղ Ստորագրութիւնը» իր «Beware Faulty Wiring» [The Armenian Reporter It'l, February 22, 1997] յօդուածի մէջ։ Տուեալ համաձայնագրերը եւ բանակցութիւնները բաւական չեն համոզելու Գերաշնորհ Արքեպահուպասին, որ Հայաստանուայց Առաքելական Եկեղեցին իր դատանական ուղղափառութիւնը չի չափում Քաղկեդոնի ժողովի դատանական որոշումների հիման վրայ եւ հեղինակի յայտարարութիւնը, միանշանակ անընդունելի էր Հայ Եկեղեցին «չէ ընդունած, մանաւանը թէ ծանանակին նոյնիսկ դատապարտած է, թիրժացութեան պատճառվ», Քաղկեդոնի ժողովը անընդունելի է։ Հայ Եկեղեցու հայրերը դարեր շարունակ, սկսած 506 թ. մինչեւ օրս համառութեամբ, հետևողականուն անընդունելի են համարել Քաղկեդոնի տիեզերաժողովի դատանարանական բանաձնությունը. դրանց շարքին հեղինակի համար շատ սիրելի «Եկումենականութեան զագարը» նուածած Ներսէս Ծնորհալին։ Հայ Եկեղեցու հայրերի կողմից Քաղկեդոնի ժողովն իրաւացիօն որակուել է հետևեալ բնուրազրություններով։ «Քիւր եւ պիղծ ժողովն Քաղկեդոնի», «յեւ անօրէն եւ պիղծ ժողովն Քաղկեդոնի», «զար ժողովյոն Քաղկեդոնի», «կանոնա մարդարան ժողովյոն Քաղկեդոնի»։ Հայ Առաքելական Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովի դատանարանական բանաձնությունը այն նոյն պատճառներով, որոնց համար մերժեցին միևն Արեւելեան քոյլ Եկեղեցիները [տես Chalcedon in Context Church Councils 400-700.ed. by Richard Price and Mary Whitby, Liverpool University Press, 2009]: 1688 թ. Նոր Չուղայում կրտսարակուած «Գիրք Ժողովածու Ընդդէմ Երկարանակաց, մանաւանը աշխարհաւեր ժողովյոն Քաղկեդոնի արարեալ սրբազնից վարդապետաց» գրքում Քաղկեդոնի ժողովը համարում է «աշխարհաւեր» իր Ընդհանրական Եկեղեցու վրայ բողած իր բացասական ազդեցութեան պատճառով։ Յովիաննես Չուղայեցին իր «Գիրք Համառօտ Վասն իսկապէս եւ ծշմարիտ Հաստոյ» (Նոր Չուղա, 1688) հատորի առաջարանում գումած է։ «Վասն իսկապէս եւ ծշմարիտ հաւատոյ։ Եւ դատանութեան ուղղափառ կարուիլիք։ Ընդհանուր հայսաստանուայց Եկեղեցւոյ [sic], զորս առաք եւ ունեմք այժմ ի Գրիգոր Սուրբ Լուսաւորչէն եւ Երիշ սուրբ ժողովոցն եւ ի սրբոց հոգի ընկալ Երկոտասան վարդապե-

տացն: Եւ ես վասն ընդդիմութեան երկարնակաց, որ հետևին բայ նոտացածին բանից իրենաց եւ ոչ բայ աւանդութեան սրբոց հոգի ընկալ հարցն»: Մխար է հեղինակի տեսակետը, որ «Վենետիկի Միսիքարեանները երբեք չեն բած, քեւ հայերը բաղկարնական եղած են, այլ միշտ ըսծած են, որ հայոց վարդապետութիւնը Քաղկեդոնի վարդապետութեան չի հակատեր»: Երբ հեղինակը հաւատում է իր ասածին, ապա ինչո՞ւ դարձեք շարունակ հայ եկեղեցին համար- և «Միսարնակ» Միսիքարեան հայրերի կողմից: Հեղինակը այս կետում ես գրադացնում է ընթերցողին բառախաղութեամբ մերս սպարեցրենելու համար մի անճշտութիւն: Հեղինակին պիտի առաջարկի մի անօամ ես կարդալ Կարապետ Եսիսկոպոս Տէր-Սկրտչեանի «Բնութեան Խնդրի նկատմամբ մեր եւ Միսիքարեան Հայրերի ունեցած հայեացք» (Արարատ 1896, էջ 155-164; 353-364) ընդարձակ յօդուածը, որտեղ հեղինակը գրում է որ թէեւ Միսիքարեան միաբանութիւնը «իր կարողութեան շափով աշխատել է ազգայնական տարրը ամոր պահել կարողիկ հայութեան մէջ», բայց նրանք «այսու ամենային մեծապես նպաստել են մեր եկեղեցւոյ, մեր ամբողջ պատմութեան մասին միսալ զարդարներ տարածելուն այդ է, որ անուրանալի է բայ մեզ, որ մենք մի քանի զծերու պետք է պապոցանել աշխատեներ»: Յօդուածի հեղինակը իր գրութեան առաջին մասը աւարտում է այս մեծահոգի խնդրանքով. «Կրօնական խնդիրներ պարզելու կրօնական թշնամութիւն սերմանել չի ճանակում: Քրիստու և եղայրութիւն բարի հեղինակը, և Նորա ոգուվ, Նորա ծշմարիտ վարդապետութիւնը հասկանալ աշխատել եղայրատեցուրին չե» («Երկերի Ժողովածու» Պրակ Ա., Մայր Արքու Ս. Եջմանին, 2008, էջ. 129-130): Հեղինակի այս խօսքերն ուղղուած են Միսիքարեան միաբանութեան երկայացուցիչ Ս. Զամշեանին, Աղեք. Պալճեանին, Վարդան Հացմուն, Լ. Կոփեանին եւ այլոց: Խոկ Սուրբիա Վրդ. Պարուեանը, նախկին Միսիքարեան Միսիքանութեան անդամ, իր «Քաղկեդոնեան ժողովը եւ Հաւատունեաց եկեղեցին» գրախօսականում նոյնուած «Վարպ Միսիքարայ Արքայի» (Վենետիկ, 1901), հանգում է հետեւալ եղայրակացորդան՝ «այլ ես կայսարական չ'երեիիք քեւ ինչպէս Հայաստանեաց եկեղեցին, ուղիղ վարդապետութեան մէջ ըլլալով, կրնար մերծած ըլլալ գլանկեդոն եւ զԼեւոն շատ

օրինաւորապէս, եւ քեւ այդ մերժումն ոչ թիվիմացուրիմ էր եւ ոչ ոչ տգիտուրիմ, այլ յամառուրիմ, որ է Հաստատամուսուրիմ այսինքն՝ այն ազգային ոգին, որ պին, ամուր եւ հաւատարիմ մնալ եւ պահպանել կը սիրէ հայունասուր աւանդուրինները» («Բանաս սէր», 1900, էջ. 34): «Այս ոյիքը, որ այսօրուա Պապը ընդգծում է քեւ՝ «որեւէ հայանական միութեան պարագային միայն հաւատուրի միութիւնն է առանց ուրիշ ողնութ պահանջի, ոչ աստուածաբանական եղայրանութեան, ոչ կանոնական իրաւակարգի». Աս մի սկզբունք էր, որ 800 տարի առաջ քանածեւէ եր հայ եկեղեցոց եռամեծ հայրապետ Ներսէս Ծնորհային եւ իրաւացի է հեղինակը իր կարծիքի մէջ, որ միութեանական շարժումը եկեղեցների մէջ չի հասել Ծնորհային խորութեան և անկեղծութեան. և մի գուցէ այդ է պատճառը, որ հայ հասարակութեան մէջ այդ հշչակումը չտնեցաւ ակնկալիք արծագանք:

Միսիքար Սերբաստացին իր «Քրիստոնեական Վարդապետութիւն և Այրբենարան» (Վենետիկ, 1750) գրքում տեղադրում է «այրբենարան ի յուսումն մանկանց հաւատացնեց», որը աւարտում է «Փրկութիւն» բարի «Փ» տառվկ, որին ընկերակցող պատկերը ներկայացնում է «Արարատ» լեռը եւ Նոյեան» տառապեր այս բնաբանվ. «Արտաքը Հռոմէական եկեղեցւոյ չիր Փրկութիւն»: Այս է Հայ Միսիքարեան հայրերի անկեղծութեան չափը: 1862թ. Վիեննայում Միսիքարեան տպարանից լոյս տեսած «Ժամակաբրգութիւն եկեղեցւոյ Հայաստանեաց բայ կարգաւորութեան սրբոց բարգանչաց և այլոց սրբոց հարց մերոց» վերանագիրը եւ բովանդակութիւնն իրար չեն համապատասխանում: Այսուեւ ես սապրդած» են որոշ խեղարիւուններ: Օրինակ Ներսէս Ծնորհայու շատ սիրելի «Առաօտ Լուսոյ» երգի «Քիսումն ի Հօրէ, բիւե ի հոգույս» բառերը դարձել են «Քիսումն ի Հօրէ եւ յՈրդույ բիւե ի հոգույս», իսկ Աւագ Հինձարքիի «Մանկունք» շարականի առաջին տողի բառերը «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի բղուրիւն մեղաց», դարձել են «Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան ի յողութիւն վարաց մերոց»:

Ղպտի եկեղեցու աստուածաբանութեան հմտութ մասնագէտ Ֆիլիպակ Լուիզիեր (Philippe Luisier SJ) իր «il mafisismo, un termine discutibile della storografia recente. Problemi teologici ecumenici [Cristianesimo nella Storia, 34


(2013),299-310] յօդուածի մէջ քննարկում «Միաբնակ» (Monophysite) եզրոյի կիրառմանը էկուսմների բանակցութիւնների շրջանակներում և առաջարկում կիրառել «տիարֆիտ» տերմինը: Այս յօդուածը բազմարի այլ աստուածաբանների ուշադրութեան առարկան դարձաւ և բազմարի անդրադարձումներ հրատարակեցին նոյն ամսագրում: Դրանցից մէկը Dietmar W. Winkler-ի յօդուածն էր, որտեղ հեղինակը արտայայտում է տեսակետ, որ Քաղկեդոնի ժողովի դաւանաբանական որոշումների հակառապետին սխալ է անուանել Սիաբնակ (Monophysite): Տարիներ շարունակ աստուածաբանական շրջանակներում ճիզ է արուել տարբերութիւն դնել իրական Սիաբնակների, այսինքն Ետիքրէսի հետևողների միջեւ և նրանց, որոնք կառչել են Կիրեղ Աղքանդացու «մի բնութիւն» բանաձեռութիւնների ոլորտում անենաշնորհնելի տերմինն այսօր պէտք է համարել «Miarphysitism»:

Բարի Վարդիկսն իր ‘Mia Physite Christology and the Oriental Orthodox Churches’ (vol.37,2016, pp.31-44) գրում է, որ Քաղկեդոնի ժողովին հակառակորդներին կոչեցին «միաբնակներ» կամ «Ետիքրէսականներ»՝ ենթադրելով, որ նրանք հետևող են Ետիքրէսի հերետիկոսութեան, մինչդեռ նրանք նզովում են: Քէ՛ Վերջինն և Քէ՛ նրա ուսմունքը: Արեւելան և կենդեցիների համար Կիրեղ Աղքանդացու բանաձեռութիւն բանին Սարմանացելոյ», ամենայարմար լեզուաբանական բանաձեռումն է՝ Քրիստոսի մէջ նարդկային և աստուածային բնութիւնների կատարեալ միութիւնը արտայայտելու համար

Քրիստոս կատարեալ մարդ է եւ կատարեալ Աստուած, քայլ միութիւնից յետոյ մարդացեալ «Բանը հեղինակն է Քրիստոսի ողջ գործունութեան»: Արեւելան և կենդեցինները երբեք չեն կիրառում ‘monophysis’, եզրը, այլ գործածում են «տիարֆիտ»-ը՝ Կիրեղեան իմաստով: Քաղկեդոնականների եւ ոչ-Քաղկեդոնականների միջեւ տեղի ունեցած երկխօսութիւնների ողջ ընթացքում, սկսած 1960 թ., գտնել են այս հասկացութեանը: Խակ Սեբաստիան Բրոկն իր պատասխան յօդուածի մէջ ‘Miarphysite, not monophysite’ (Vol.37,2016 45-54) գրում է, որ թէ Լուիզիլը իր բոլոր վիճակուններով արդարացի է ‘miasfisismo’ եզրի կիրառութեան առնչութեամբ, սակայն էկումների տեսանկիւնից, ‘տիարֆիտ’, ‘տիարփիտ’ եզրերը կարեւոր դեր ունեն քրիստուարանական երկու դիրքերի տարբերութիւնները շեշտնելու և լրաց անհասկացողութիւններից խուսափելու համար:

Լեռն Արքեպիսկոպոս Գերիեանի այն դիտողութիւնը, թէ Գիրքոր Նարեկացու «Տիեզերական Վարդապետ» հռչակելը «աննշմար անցա՛ առհասարակ մեր հայ հասարակութեան մէջ, նոյնիսկ մտաւորականութեան, նոյնիսկ թիեւս երեմն, եղանակ հոգեւորականութեան մէջ», անկենծութեան պակասի պատճառով էր: Ժամանակն է Սիսիաբեան Ուխտի միաբնակները յստակեցնեն որոշ բառաձեռումների խվական իմաստները՝ «Եկեղեցւյ Հայաստանաց ըստ կարգադրութեան սրբոց Թարգմանչաց» կամ «Ամեր հասարակութեան». ո՞ր «Հայաստանաց եկեղեցւյ» և ո՞ր հասարակութեան» մասին է խօսքը:

#### Լոնտոն



Ս. Գիրքոր Նարեկացիի «Տիեզերական Վարդապետ» հռչակումը Վատիկանի մէջ